

դէն այս ատենները Հալէպի բանուկ ճանապարհը դրեթէ գոցուած էր Թուրք-Վենետիկեան ծովամարտերու պատճառաւ :

Հալէպ Հայ վաճառականներու գլխաւոր հանգրուաններէն մին էր դարերով : «Ամբողջ արեւելքի գլխաւոր շուկան, յաճախուած Պարսիկներէ, Հնդկիկներէ, Հայերէ եւ բոլոր Եւրոպացիներէն : Իր նաւահանգիստը Իսկէնտէրունն է : Հոգը շատ բարեբեր է եւ կը սնուցանէ առատ շերամ» : (3) Հոս աւելցնեմ միայն, որ Իսկէնտէրուն թէեւ Հալէպի հնագոյն նաւահանգիստն էր, սակայն Թրիփոլի կամաց կամաց իր տեղը զբաւեց, զետեղուած ըլլալով նախորդէն քիչ հետո Միջերկրականի վրայ աւելի մեծ յարմարութիւններով, որմէ գլխաւորաբար Վենետիկցիք կ'օգտուէին : Հալէպ մինչեւ ԺԸ դար շարունակեց շահաստան մը ըլլալ, նախայն զրկուած իր նախկին համաշխարհային փառքէն ու համբաւէն լոկ երկրորդական նշանակութեամբ աւելի նուիրուած ներքին առեւտուրի, պահեց իր գոյութիւնը :

Մեր նիւթին համար կարեւոր են կարգ մը անգլիերէն վաւերագրութիւններ : Մր. Անդօնի ձէնքինարն 1561-ին կը տեղեկացնէր Անգլիացի Վաճառականներու Ընկերութեան ի Լոնտոն : «Այս (Շամախի) քաղաքը (Կասպից) ծովեզերքէն ուղարի գնացքով եօթը օրուան ճանապարհով հետու է, այժմ շատ աւերուած եւ գլխաւորաբար Հայերէ բնակուած : Կայ Արբաշ անունով ուրիշ քաղաք մըն ալ, Վրացիներուն սահմանակից, որ գլխաւոր եւ ամենաառատ (վայրն) է ապրանքներու առեւտուրի, եւ այդ կողմերը կը բուծուի ամենաշատ հում մետաքս, եւ հոն կ'երթեւեկեն Թուրքեր, Սիւրիացիներ եւ ուրիշներ : Գարձեալ հոն կը գտնուին զանազան լաւ եւ պիտանի ապրանքներ... բայց այդ տեղի գլխաւոր արտադրութիւնն է ամէն տեսակ հում մետաքս, որմէ մեծ առատութեամբ կայ» : (4)

(3) Purchas... Vol. IX p. 103:

(4) Hakluyt's Voy. Vol. II, p. 17:

Կը վկայուի որ «Արբաշ քաղաք, ուր մետաքսի մեծագոյն պահեստը կարելի է գտնալ», որ Վրացիներուն սահմանակից է, կը կոչուի Արաս, ըլլալով վաճառականութեան ամենա-

1566 Օգոստոս 8 թուակիր եւ Շամախէն դրեալ նամակով մը Մր. Արդըր Էտուարաս կը տեղեկացնէ : «Սիւրիոյ մէջ Հալէպ կոչուած քաղաք մը կայ, ուր շարունակաբար բնակող բազմաթիւ Վենետիկցիներ կան, բացի անոնցմէ որոնք տարեկան հոն կուգան գնելու համար բուրգ, զխտոր, ոչխարի ճարպ, սաֆրան, մորթ, բամպակ եւ ուրիշ ապրանքներ եւ մեծաքանակ համեմներ : Գարձեալ հայերը Վենետիկցիներուն ձեռքէն տարեկան կը ստանան բուրգէ կերպաս (5) փոխարէն հում մետաքսի, երբեմն ստանալով 60 ծրար զերսի այս երկրին 70 պաթման հում մետաքսին փոխարէն, եւ 40 ծրար Վրական մետաքսի : Իսկ բուրգէ կեր-

գլխաւոր եւ հարուստ քաղաքը, մասամբ առատ մետաքսի արտադրութեան համար, մասամբ ալ հոն արտադրուող եւ կամ հոն բերուած ընտիր եւ պիտանի ապրանքներու համար, որպէս կոչու ու յղուած գլխտոր, բամպակ, պաղլիկ, բացի ամէն տեսակ համեմներէ, զեզերէ, աղամանդներէ եւ շարիւղաներէ, նաեւ ուրիշ տեսակ զոհարներէ արեւելեան Հնդկաստանէն արտածուած : Բայց գլխաւոր ապրանքը ամէն տեսակէ հում մետաքսն է, այնպէս որ տարեկան ասկէ Հալէպ կը տարուի 500 եւ երբեմն 1000 ջուրի մետաքս բեռցուած» : (John Cartwright, 1603, ... Purchas His Pilgrimes, Vol. VIII, p. 501) :

(5) Այս վաւերագրութիւններուն թէ ոճը եւ թէ բառերը դժուարըմբռնելի են : Karsies, kersy հին Անգլիերէն բառ մըն է, այժմ բոլորովին անգործածելի, որ կը նշանակէ բուրգէ կողաւոր երկար կոշտ կերպաս մը : ԺՁ. դարուն Անգլիոյ գլխաւոր արտադրութիւնը, որ Վենետիկցիները ձեռք կը բերէին անոնցմէ փոխանակութեամբ հում մետաքսի, գլխտորի, կաշիի, պաղլիկի, համեմներու : Եւ որովհետեւ Անգլիացիք միշտ կը տուժէին այս փոխանակութիւններէն, ուզեցին ուղղակի արեւելեան հրապարակը իջնալ եւ ուղղակի իրենց գերսիմ փոխանակել արեւելեան ապրանքներու հետ : Այս մասին տես իմ ստուգանքներու ՎԱՅՅԵՒՄՆԳՐԻՍԿԱՆ ԴՐԱՄԱԳԻԼԻԻ ՊԱՅԲԱՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՁ (1550-1600) «Հայրենիք» Ամսալրի 1940-ի թիւերուն մէջ :

Գուցէ karsie-էն ծագած է cassimere :